ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանում 28.12.2013թ. տեղի ունեցած մարզխորհրդի նիստի

Մասնակցում էին՝

Ն.Մովսիսյան մարզպետի տեղակալ
Մ.Աբգարյան մարզպետի տեղակալ
Հ.Գևորգյան մարզպետարանի աշխատակազմի ղեկավար
Ռ.Մկրտչյան մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ
Հ.Օհանյան ՏԿՆ ներկայացուցիչ
ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ
ՀՀ Արագածոտնի մարզի համայնքների ղեկավարներ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ո Ւ Մ

1.ՀՀ Արագածոտնի մարզի համայնքներում 2013թ. սեփական եկամուտների հավաքագրման և նախորդ տարիներին գոյացած աշխատավարձների և սոցվճարների պարտքերի մարման գործընթացի տարեկան արդյունքների մասին/ զեկ. Մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ն. ԳԱԼՍՏՅԱՆ /:

2.ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից ՀՀ Արագածոտնի մարզի համայնքներում իրականացված համայնքային ծառայության գործավարության ուսունասիրության արդյունքների մասին /զեկ. ՏԻՄ վարչության պետ Ս. Հովսեփյան/ :

3.Բնակչության ռեգիստրում մարզի համայնքների բնակչության հաշվառման խնդիրների մասին / զեկ. ՏԻՄ վարչության պետ Ս. Հովսեփյան/:

4.ՀՀ Արագածոտնի մարզպետ Ս. Սահակյանի զեկույցը մարզի 2013 թվականի սոցիալ-տնտեսական իրավիճակի , կատարված աշխատանքների և 2014 թվականին կատարվելիք աշխատանքների մասին:

Մարզպետ Ս. Սահակյանի շնորհավորական խոսքը մարզխորհրդի անդամներին՝ 2014 թվականի Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ:

Մինչ օրակարգային հարցերին անցնելը, փոխմարզպետ Նունե Մովսիսյանը ներկայացրեց. «Անալիտիկ» կենտրոնը դեկտեմբերի 27-ին ամփոփեց «ԱՍ» քաղաքական-հասարակական մրցանակաբաշխության արդյունքները, համաձայն որի „Տարվա լավագույն մարզպետ„ անվանակարգում լավագույն մարզպետ է ճանաչվել Արագածոտնի մարզպետ

Սարգիս Սահակյանը: Նա «Անալիտիկ» կենտրոնի հիմնադիր-տնօրեն «ԱՍ» մրցանակաբաշխության կազմակերպիչ Անի Հովհաննիսյանի կողմից մարզպետին փոխանցեց մրցանակը եւ վկայականը: Սա պատահական արդյունք չէ: Սարգիս Սահակյանը կանգնած է մարզպետարանի կայացման ակունքներում: 1996 թվականից ի վեր մարզպետարանի աշխատակազմում է, նախ՝ որպես գյուղատնտեսության եւ բնապահպանության վարչության պետ, ապա՝ 7 տարի եղել է փոխմարզպետ, իսկ 2009 թվականից սկսած ղեկավարում է մարզը:

Այնուհետեւ մարզպետը „ Հայ ասպետ„ ինտելեկտուալ խաղի հաղթող Աշտարակի Ն. Աշտարակեցու անվան դպրոցի տնօրենին հանձնեց մրցանակը:

Այս տարի մարզի համայնքները հաջող արդյունքներ են գրանցել սեփական եկամուտների կատարման ուղղությամբ: Այս մասին ասաց ֆինանսական եւ սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Նորայր Գալստյանը: Դեկտեմբերի 27-ի դրությամբ սեփական եկամուտները կատարվել են 91,2 %-ով: Մինչեւ տարեվերջ այս թվերը վստահաբար աճելու են, եւ ընդհանուր ցուցանիշի աճ կլինի:

Տարեվերջյան ամփոփիչ հաշվետվությամբ հանդես եկավ Սարգիս Սահակյանը: Նա շնորհակալություն հայտնեց «Անալիտիկ» կենտրոնի մրցանակաբաշխության „Տարվա լավագույն մարզպետ„-ի հաղթանակի համար, նշելով, որ դա բոլորի, թե մարզպետարանի աշխատակազմի, թե համայնքների, դպրոցների, մարզային տարբեր կառույցների եւ կազմակերպությունների ղեկավարների համատեղ ձեռքբերումն է: Այնուհետեւ որոշակի օրինակներով նշեց արձանագրված ձեռքբերումները:

Մարզպետ տեղեկացրեց, որ 2014 թվականին բազմաթիվ նոր ծրագրերի ու նախագծերի իրականացում է նախատեսվում: Այդ նպատակով նա կլոր սեղանի շուրջ տարեվերջին հանդիպում է ունեցել ավելի քան 26 միջազգային եւ տեղական տարբեր կազմակերպությունների, հիմնադրամների, ծրագրերի ղեկավարների հետ, եւ ձեռք են բերվել բավականին ընդգրկուն պայմանավորվածություններ:

Սարգիս Սահակյանը լավագույն ձեռքբերումներ ունեցած համայնքների ղեկավարներին հանձնեց պատվոգրեր եւ շնորհավորեց բոլոր համայնքապետերին, մարզխորհրդի նիստի մասնակիցներին՝ Նոր տարվա եւ Սուրբ Ծննդի կապակցությամբ:

Ս.ՍԱՀԱԿՅԱՆ